«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդ միավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին

Մարզ՝ Արագածոտնի մարզ

Ուսումնական հաստատություն՝ Ծաղկահովիտի միջնակարգ դպրոց

Առարկա՝ Պատմություն

Հեղինակ՝ Վարդանյան Վարդուհի

Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդ միավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին

Բովանդակություն

Ներածություն ……3

1. Հաստատության մեթոդական միավորման ուսուցչի մասնակցության արդյունավետությունը ……..5
2. Հաստատության մեթոդական միավորման դերը ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների զարգացման հարցում ……12

Եզրակացություն ……17

Օգտագործված գրականության ցանկ ……19

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու

և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝

- մանկավարժական խորհուրդ,
- առարկայական մեթոդական միավորումներ,
- ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ:

Դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ:

Մեթոդական միավորումները ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևա - վորվել մեթոդական միավորումներ հարակից առարկաների ուսուցիչներից, իսկ դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում:

Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝

- քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչնե - րին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլան - ների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթո - դական ձեռնարկները, և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին (դասվարներին) տալիս երաշխավորություններ,
- ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և ներդնում գործնական աշխատանքում,
- նպաստում է ուսուցիչների (դասվարների) որակավորման բարձրացմանը,
- որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին /դասվարներին/ նախապատրաստում է ատեստավորման,
- կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական, խորհրդակցություններ, խորհրդատվություններ,
- ուսուցիչներին (դասվարներին) հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ,

- սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն,
- մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում առաջարկություն ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման մասին,
- կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում մեթոդական միավորման անդամների միջև և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին,
- կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ:

Տարբեր դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ կարող են ստեղծվել միջդպրոցական մեթոդական միավորումներ: Մեթոդական միավորումների նիստերը գումարվում են ամիսը առնվազն մեկ անգամ և արձանագրվում են:

Թեմայի նպատակը և խնդիրները: Թեմայի նպատակն է ուսումնա - սիրել՝ ուսուցչի մասնակցության արդյունավետությունը հաստատության մեթոդ միավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին:

Խնդիրներն են՝

- ուսումնասիրել՝ հաստատության մեթոդական միավորման ուսուցչի մասնակցության արդյունավետությունը,
- ուսումնասիրել՝ հաստատության մեթոդական միավորման դերը ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների զարգացման հարցում:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը:

Հետազոտական աշխատանքը կազմված է՝ ներածական մասից, երկու բաժիններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

1. Հաստատության մեթոդական միավորման ուսուցչի մասնակցության արդյունավետությունը

Ուսուցչի մասնագիտությունը ընտրողից պահանջվում է ընդունակությունների, բնավորության գծերի խիստ որոշակի կառուցվածք, ինչպես նաև այդ աշխատանքի նկատմամբ սոցիալ-հոգեբանական տրամադրվածություն:

Ա.Ս. Մակարենկոն «Դրոշներն աշտարակների վրա» վիպակում գրել է. «Երեխաները կենդանի կյանքեր են ու գեղեցիկ կյանքեր և դրա համար հարկավոր է նրանց վերաբերվել ինչպես ընկերների ու քաղաքացիների, հարկավոր է հարգել նրանց իրավունքներն ու պարտականությունները, ուրախությունն ու պատասխանատվության իրավունքը»:

Ուսուցչի մանկավարժական վարպետությունը, տակտն ու հեղինակությունը մեծ դեր են խաղում աշակերտների բարոյական դաստիարակության գործում և այս հարցում մեծ նշանակություն ունի ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդ միավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին:
Ըստ ամենայնի խրախուսելով և զարգացնելով աշակերտների նախաձեռնությունն ու ինքնուրույնությունը՝ ուսուցիչը շտկում է նրանց հետ հարաբերությունների ոճը նրանց աճող ինքնուրույնության համապատասխան: Աշակերտների նկատմամբ հարգանքը դպրոցում պետք է լինի ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմքերի հիմքը: Ուսուցչի հարգանքն աշակերտների նկատմամբ՝ որպես անձի՝ դա աշակերտի անձը նսեմացնելու, նրա արժանապատվությունը վիրավորելու անթույլատրելիությունն է: «Անձի պրոբլեմը, - գրել է Մակարենկոն, - կարող է լուծվել, եթե ամեն մարդու մեջ կարողանանք տեսնել անձնավորությունը»:

Անձնավորությանը ձևավորելու համար մանկավարժի ջանքերը աշակերտի կողմից կընդունվեն պատասխան դրական ռեակցեաներով: Որոշ իմաստով կարելի է ասել, որ դաստիարակությունը փոխադարձ բարի ցանկության, փոխադարձ վստահության ու հարգանքի արտահայտությունն է, որոնք սահմանվում էին ուսուցչի և աշակերտների միջև: Դպրոցականների դաստիարակության գործում մեծ դեր և նշանակություն ունի ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդ միավորումների աշխատանքներին, քանի որ այնտեղ ուսուցիչը հմտանալով և

հղկվելով ու ձեռք բերելով մանկավարժական վարպետություն ունենում է կենսահաստատ ուժ և վճռորոշ նշանակություն: Ուսուցչի մանկավարժական վարպետությունը արդյունավետ ուսուցման նախապայմանն է: Մանկավարժական վարպետությունը ուսուցչի անձնական որակների, գիտելիքների, մանկավարժական կարողությունների ու հմտությունների համադրությունն է:

Մանկավարժական վարպետությունը, ինչպես նշում է Մակարենկոն, տաղանդավոր մարդկանց հատկությունը չէ: Դա մասնագիտություն է, որը պետք է սովորեցնել, ինչպես սովորեցնում են երաժշտին, բժշկին: Այն աճում է փորձի կուտակման, մանկավարժական գիտելիքների, մանկավարժական կրթության ընդլայնման ընթացքում և այս ամենին նպաստում է նաև մեթոդ միավորման աշխատանքները, ինչպես նաև փորձառու ուսուցչի հմտությունները և փորձի փոխանակումը[1]:

«Մանկավարժական վարպետություն» հասկացությունը լայն հասկացություն է, որի մեջ մտնում են մի շարք բաղադրիչներ, որոնցից կախված է մանկավարժական վարպետությանը տիրապետելու հաջողությունը:

Մեթոդ միավորման աշխատանքների առաջնային նախապայմաններից է՝ տալ մանկավարժին հմտություն, որը կլինի աշակերտին ճիշտ հասկանալու, նրա գործունեությունը նպատակաուղղված ղեկավարելու կարողությունը:

Հաջորդ բաղադրիչը մանկավարժական տեխնիկան է, որը անհրաժեշտ հմտությունների և ունակությունների ամբողջությունն է:

Մանկավարժական տեխնիկայի մեջ է մտնում՝

- երեխաների հետ շփման ճիշտ տոն ու ոճ ընտրելու կարողությունը,
- աշակերտների ուշադրությունը կառավարելու հմտությունը,
- շարժումների, դիմախաղի տեխնիկան,
- խոսքի արտահայտչականությունը,
- տեմպի զգացումը:

Մանկավարժական տեխնիկայի մեջ է մտնում նաև ուսուցչի խոսքի կուլտուրան՝

[1] Տե'ս, Բալյան Ա.Ա., Մանկավարժական վարպետության հիմունքներ, Երևան 1988, էջ 81-82:

- ճիշտ առոգանությունը,
- կարգավորված ձայնը,
- շնչառությունը,
- միմիկայի ու ժեստիկուլյացիայի միացումը:

Մեծ մանկավարժ Մակարենկոն հատուկ նշանակություն էր տալիս ուսուցչի ձայնի դրվածքին, շարժումներին: Պետք է կարողանալ «մի քիչ խաղալ», բայց բնական ու անկեղծ լինել աշակերտների աչքում: Նա այսպես է գրում. «Իմ պրակտիկայում ինձ համար, ինչպես և շատ ուսուցիչների համար այդպիսի «դատարկ բաները» վճռական եղան: Ինչպե՞ս կանգնե՞լ, ինչպե՞ս նստել, ինչպե՞ս վեր կենալ աթոռից, ինչպե՞ս բարձրացնել ձայնը, ժպտալ, ինչպե՞ս մոտենալ աշակերտներին, ինչպե՞ս նայել ... սրանք մեզ ոչ ոք չի սովորեցրել, իսկ դրանք կարելի է և պետք է սովորեցնել»:

Կոմենսկին ուսուցչի գործունեությունը դիտեց որպես յուրահատուկ արվեստ, լայնորեն ու կոնկրետ դիտարկեց մանկավարժական արվեստի ու վարպետության հարցերը:

Նրա կարծիքով, ուսուցիչ-դաստիարակին բնորոշ են հետևյալ հասկացությունները՝

- մարդկային բարձր կուլտուրա,
- հանրագիտարանային իմացություն,
- բարոյական ազնվություն,
- խոսքին կատարյալ տիրապետելու արվեստ,
- անհուն սեր գործի նկատմամբ:

Ժան Ժակ Ռուսոյի կարծիքով, առանց մանկավարժական վարպետության հնարա - վոր չէ լուծել ազատամիտ, մարդասեր, արդարացի ու շիտակ մարդ դաստիարակելու բարձրագույն խնդիրը:

Ըստ Ռուսոյի և Կոմենսկու՝ մանկավարժական վարպետության կարող է ձևավորվել միայն այն դեպքում, եթե դաստիարակը խորապես ուսումնասիրել է երեխայի բնությունը, բազմակողմանիորեն ճանաչում է նրան, քանի որ առանց

դրան հնարավոր չէ ճիշտ ընտրել նրա դաստիարակության միջոցներն ու հնարները, կանխատեսել դաստիարակչական պրոցեսների արդյունքները:

Ականավոր մանկավարժ Դիստերվեգը կարծում էր, որ ուսուցիչը պետք է գտնվի իր բարձրության վրա: Նա աշխարհ է գալիս նախադրյալներով, որոնք անհրաժեշտ են նրա կոչման համար, բայց դրանք պետք է խթանվեն ու զարգացվեն: Ուսուցիչը պետք է աշխատի իր վրա: «Այն ուսուցիչը, որ դադարում է սովորելուց, դադարում է ուսուցիչ լինելուց», - ասել է Դիստերվեգը: Դիստերվեգը վարպետ մանկավարժներին բնորոշ գծերն էր համարում ուժեղ կամքը, կայուն բնավորությունը, բարձր բարոյական հատկանիշները, արիությունը: Բարոյական առումով դաստիարակը պետք է լինի այնպիսին, ինչպիսին ցանկանում է տեսնել իր սաներին: Ոչինչ և երբեք չի կարող փոխարինել ուսուցիչ դաստիարակին, նրա մանկավարժական վարպետությանը, տակտին, կուլտուրային և հեղինակությանը: Մեր օրերում էականորեն փոխվել է ուսուցչի դերը հասարակության մեջ[2]:

Հաստատության մեթոդական միավորումը մեծ ուշադրություն է դարձնում ուսուցչի դերի լիարժեք կայացմանը, որի մեջ մտնում են ուսուցչի մասնագիտական ունակությունները, կարողությունները, հմտությունները և էթիկան: Ուսուցիչը երկու դեր է կատարում աշակերտի կյանքում: Առաջին՝ նրա կյանքում, և երկրորդ նրա կրթության հարցում: Մարդու աշխարհայացքը կենսակերպը ձևավորվում է մանկավարժ-ուսուցչի հոգևոր ու մտավոր ունեցած դերի անմիջական ազդեցությամբ: Ուսուցչի հաջողությունը մեծապես պայմանավորված է ուսուցչի թե անձնային, թե մասնագիտական որակներով: Ուսուցչի դերից և աշխատանքի որակից է կախ - ված թե վաղն ինչ անհատներ կյանք կմտնեն և ովքեր կձևավորեն մեր հանրությունը՝ որոշելով պետության ապագան:

Հաստատության մեթոդական միավորման շրջանակներում ընդգծվում են ուսուցչի մասնագիտական դերի կարևորությունը դիտարկվում նրա ֆունկցիա - ները, ընդունակությունները, կարողությունները, վերլուծվում նրան ներկայացվող

[2] Տե՛ս, Թոփուզյան Ա., Ուսուցչին ներկայացվող ժամանակակից պահանջները, Մանկավարժական ժամանակակից հիմնախնդիրներ, Երևան 2015, էջ 51-52:

պահանջները և հասարակության կողմից նրան ներկայացված սոցիալական սպասելիքները։

Ինչպես նշում է Աէլիտա Մարկովան, «մասնագիտությունները գործունեության՝ պատմականորեն հաստատված ձևեր են, որոնք անհրաժեշտ են հասարակու - թյանը, որոնց իրացման համար մարդը պետք է օժտված լինի գիտելիքների և հմտությունների համագումարով, ունենա համապատասխան ընդունակություններ և մասնագիտական կարևոր որակներ»։

Մանկավարժությունը դասվում է «Մարդ-Մարդ» մասնագիտությունների շարքին։ Այս տեսակի մասնագիտություններին բնորոշ է մարդու հետևյալ որակները.

- մարդկանց հետ աշխատանքի ընթացքում կայուն, լավ ինքնազգացողությունը,
- շփման պահանջմունքը,
- էմպատիան,
- ուրիշների մտադրությունները, տրամադրությունը,
- ձգտումներն արագ հասկանալու ընդունակությունը,
- լավ իմանալ և հիշել շատ մարդկանց անձնային որակների մասին ինֆորմացիան։

Այս մասնագիտական սխեմային պատկանող մարդուն բնորոշ են՝ ղեկավարելու, սովորեցնելու, դաստիարակելու, «այլ մարդկանց պահանջմունքների բավարար - ման համար օգտակար գործողությունների կատարման» կարողություններ, լսելու և լսվելու կարողություն, շատ լայն մտահորիզոն, խոսքային, կոմմունիկատիվ մշակույթ, դիտողականություն, ապրումակցման, ոչ ստանդարտ իրավիճակների լուծման ընդունակություն, ինքնակարգավորման բարձր ընդունակություն, «խորը հավատ և օպտիմիստական համոզմունք ժողովրդին ծառայելու գաղափարի նկատմամբ», ինքնավստահություն, որ մարդը միշտ կարող է դառնալ լավը։

Ընդ որում, եթե հաշվի առնենք, որ «Մարդ-Մարդ» սխեման բնութագր - վում է՝ տիպական նախընտրությունների, հետաքրքրությունների, անձնային առանձնահատկությունների որոշակի հավաքով, ապա մարդու մասնագիտական բնութագիրը դառնում է խորը տիպականացված։ «Մարդ-Մարդ» սխեմայով աշխա -

տող մարդու մասնագիտական գործունեություններից են՝ խոսքի դեֆեկտները, շփվողականության բացակայությունը, արտահայտիչ հակացուցված ֆիզիկական թերությունները, անտարբերությունը մարդկանց նկատմամբ, մարդկանց նկատմամբ անշահախնդիր հետաքրքրության բացակայությունը։

Վերը թվարկված առանձնահատկությունները արտացոլում են այս մասնագիտության տիպին պատկանող սուբյեկտի ընդհանուր պատկերը։ Այս սխեմայի մեջ մտնող մանկավարժի մասնագիտությունը առաջադրում է մի շարք հատուկ պահանջներ, որոնց շարքում հիմնականը մասնագիտական կոմպետենտությունն է և դիդակտիկ մշակույթը։

Հաստատության մեթոդական միավորման շրջանակներում ներառված են նաև հարաբերությունների այլ սխեմաներ, և առաջին հերթին, «Մարդ-Նշան»։ Նշանային, հատկապես լեզվական համակարգերը մանկավարժական գործունեության մեջ հասարակական-պատմական փորձի փոխանցման հիմնական միջոցն են, միևնույն ժամանակ հենց նշանային համակարգերը յուրացման առարկա են։

Ժամանակակից կրթական գործընթացում կարևոր դեր է խաղում համակարգչային տեխնիկան։ Մանկավարժն այն օգտագործում է որպես գիտելիքների փոխանցման միջոց, և որպես ուսումնասիրության առարկա։

Կլիմովն առանձնացրել է յուրաքանչյուր մասնագիտության տեսակին բնորոշ գործողությունների 4 խմբեր[3].

1. Շարժողական-տեղափոխման, դիրքի,
2. Ճանաչողական - ընկալման, երևակայության, տրամաբանական,
3. Միջանձնային շփման - դիագնոստիկ,
4. Գործողություն-պահանջ, ինֆորմացիոն կառավարման գործողություն։

Մանկավարժը՝ որպես գործունեության սուբյեկտ, դասապրոցեսում իրականացնում է բոլոր այս գործողությունները, ինչը վկայում է նրա ինտելեկտուալ և վարքային կուլտուրայի բազմակողմանիության մասին։ Ըստ գործունեության սուբյեկտի առջև դրված նպատակների՝ մանկավարժական գործունեությունը ենթադրում է իր

[3] Տե՛ս, Մինասյան Բ., Մանկավարժութեան հիմունքները, Թաւրիզ 1931, էջ 31-33։

սուբյեկտից վերափոխման (զարգացման, փոփոխության) խնդիրներ դնելու և լուծելու կարողություն, ինչպես նաև այդ խնդիրները լուծելու նոր միջոցների և եղանակների փնտրում: Նշելով աշխատանքի ֆունկցոնալ գործիքների մասին՝ պետք է նշել, որ մանկավարժի խոսքը նրա գործունեության կարևորագույն բնութագրերից մեկն է:

2. Հաստատության մեթոդական միավորման դերը ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների զարգացման հարցում

Ժամանակակից կրթությունն ուղղված է սովորողների մտածողության, մասնագիտական նախաձեռնողականության, ինքնուրույնության զարգացմանը, ինչը կապահովի մրցունակ մասնագետի պատրաստումը: Այդպիսի մասնագետը ունակ կլինի հարմարվել ցանկացած սոցիալական միջավայրին, ծավալել աշխատանքային որոշակի գործունեություն, ինքնակրթվել և ինքնուրույնանալ:

Կրթական մի շարք փաստաթղթերում նշվում է, որ զարգացող հասարակությանը պետք են կրթված, բարոյական, նախաձեռնող անձինք, ովքեր տարբեր իրավիճակներում ունակ են համապատասխան որոշումներ կայացնել:

Կրթական գործընթացում, որպես երաշխավոր, ինքնուրույն մտածողու - թյան ձևավորող ու գործունեության արդյունքների կանխատեսող հանդիսանում է ուսուցիչը: Հենց այդ պատճառով բարձրացել է հաստատության մեթոդ միավոր - ման մասնակցության պահանջարկը որակյալ, ստեղծագործական մտածողու - թյուն ունեցող, կոմպետենտ ու նախաձեռնող, մրցունակ ուսուցչի նկատմամբ, ով ունակ է արդի, դինամիկ աշխարհում ձևավորել համակողմանի զարգացած անձնավորություն: Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացման անհրաժեշտությունը բխում է վերոնշյալ խնդիրների՝ հնարավորինս արագ լուծման անհրաժեշտությունից: Ընդհանուր առմամբ, կոմպետենտ է համարվում այն անձը, ով մոբիլիզացիոն և գործառնական ոլորտներում տիրապետում է մասնագիտա - կան գործունեության նորմերին, արդյունավետորեն, բարձր արտադրողականու - թյամբ իրականացնում է աշխատանքային գործունեություն՝ հետևելով բարձր ստանդարտների, ինչպես նաև վարպետության ձգտելով՝ ինքնուրույն կառու - ցում է պրոֆեսիոնալ աշխատանքային սցենար, ունենում է մասնագի - տական կայունացման նպատակակետ, իր մասնագիտությամբ ձգտում է անձի անհատականության զարգացմանը, մասնագիտական փորձը հարստացնում է յուրօրինակ ստեղծագործական ներդրումով, նպաստում է հասարակության մեջ տվյալ մասնագիտության հեղինակության բարձրացմանն ու հետաքրքրության առաջացմանը: Տարբեր մասնագետներ կարող են կոմպետենտությունը ներկայացնել

վերը նշված հատկանիշների բացարձակապես այլ շարքեր և հենց այսպիսի մասնագետների ներգրավվածությունը և մասնակցությունն էլ հարկավոր է հաստատության մեթոդական միավորմանը, որտեղ նման մասնագետները կարող են իրենց փորձը փոխանցել սկսնակ ուսուցիչներին: Այս պարագայում մանկա - վարժի արհեստավարժությունը դիտարկվում է որպես առարկայական, մեթոդական, հոգեբանամանկավարժական գիտելիքների, կարողությունների, անձնային որակ - ների ամբողջություն և մասնագիտական զարգացման արդյունք[4]:

Հաստատության մեթոդական միավորումներում մասնագիտական զարգացումը դիտվում է որպես մասնագիտական արհեստավարժության տանող հիմնական ուղի: Ուսուցչի անձի զարգացումն ու արհեստավարժությունը փոխկապակցված են և փոխլրացնում են միմյանց:

Դպրոցի գերխնդիրն է կոմպետենտ մանկավարժ ունենալը, իսկ հաստատության մեթոդական միավորմանը՝ ապահովել նման մանկավարժներով, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները:

Պետության կողմից իրականացվող վերապատրաստումներն, որոնք նաև իրականացվում է հաստատության մեթոդական միավորման միջոցով՝ ուղղված են խնդրի լուծմանը, սակայն կան թերություններ, որոնք խաթարում են գործընթացի լիարժեքությունն ու ամբողջականությունը:

Վերապատրաստումները կարճատև են, բոլորին վերապատրաստում են նույն ձևով, նույն բովանդակությամբ:

Առկա բացն ինչ-որ չափով լրացնում են տարբեր ծրագրերի շրջանակում կազմակերպվող սեմինարները և ուսուցչի ինքնակատարելագործումը:

Ոսուցչի արհեստավարժության զարգացումն անհնար է դիտարկել առանց ուսուցչի ինքնակատարելագործման: Այս պարագայում առաջ է գալիս անձի մոտիվացիան, որը դիտվում է որպես գործոնների համակարգ, որոնք բնորոշում են մարդու վարքի

[4] Տե'ս, Абросимов В.Н., Профессиональные качества преподавателя, стандарты и мониторинг в образовании 2001, No 6, էջ 61-64:

ուղղությունը: Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացման համար անհրաժեշտ է ձևավորել ինքնակատարելագործման մոտիվացիա հանուն նոր գիտելիքների և մասնագիտական հմտությունների ձեռքբերման:

Հարկ է նշել նաև, որ մասնագիտական ինքնակատարելագործումը հնարավորություն է տալիս զարգացնելու մասնագիտական գործունեության կարողություններն ու հմտությունները:

Վերջիններս ուսուցչին արդյունավետորեն գործելու հնարավորություն են տալիս, և ըստ Վ.Գ. Գորբի և Վ.Ա. Դյոմինի՝ «Համարվում են մասնագիտական կոմպետենտության ինտեգրացնող բաղադրիչներ»:

Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության բաղադրիչները, ինչպիսիք են՝

- մանկավարժական մշակույթը,
- աշխատանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքը,
- մասնագիտական որակները,
- գիտելիքները, կարողությունները և հմտությունները անընդհատ թարմացման և վերանայման կարիք են զգում:

Ուսուցչի մասնագիտական որակի ապահովումը և բարձրացումը այսօր իրագործվում է հատուկ հիմնարկներում՝ մանկավարժական բուհերում, Կրթության ազգային ինստիտուտում:

Ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների շարքում ոչ միայն կարևորում են մասնագիտական գիտելիքները, այլ կարողություններն ու հմտությունները, որոնց զարգացման շուրջ վերապատրաստման ծրագրերում ևս առկա են բազում թերություններ: Վերապատրաստաման ընթացքում գործնական պարապմունքները ֆրոնտալ են, խմբային, չկան անհատական գործնական պարապմունքներ կամ էլ լիարժեք չեն իրականացվում: Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ ուսուցիչը ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրատվածություն և բարո - յական որակներ, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ:

Ուսումնասիրելով հիմնախնդիրը՝ եկանք եզրակացության, որ ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումն արդի կրթական պահանջների արտացոլանքն է, որում մանկավարժական կոմպետենտությունը սահմանվում է որպես ուսուցչի[5]՝

- գիտելիքների,
- կարողությունների,
- իրազեկությունների, և
- մասնագիտական պատրաստվածության մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել փոփոխվող սոցիալական, մշակութային և մասնագիտական իրավիճակներում:

Հաստատության մեթոդական միավորման շրջանակներում կոմպետենտությունը դիտվում է որպես սեփական արդյունավետ ռազմավարությամբ հաջող գործունեությունն ապահովող անձնային ներուժ, իսկ կոմպետենցիաները խնդիրները լուծելու, խոչընդոտները հաղթահարելու, նպատակին հասնելու հաջող գործունեության կոնկրետ ռազմավարություններն են:

Ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունը բաղկացած է հետևյալ կոմպետենցիաներից.

- Ելակետային կոմպետենցիաներ, որոնք հատուկ են ունիվերսալ ուսուցիչ - ներին և ապահովում են նպատակային, արդյունավետ մանկավարժական գործունեություն:
- Առարկայական կոմպետենցիաներ, որոնք բնորոշում են կոնկրետ ուսուցիչներին և ապահովում են կոնկրետ ուսումնական առարկայի արդյունավետ դասավանդումը:
- Մասնագիտական կոմպետենցիաներ, որոնք հատուկ են նեղ մասնագիտությամբ մանկավարժներին և ապահովում են ծագող մանկավարժական խնդիրների լուծումը, անհրաժեշտ են կրթության

[5] Տե'ս, Маркова А.К., Психология труда учителя, книга для учителя. Москва: Просвещение 1993, էջ 19-21:

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների, հոսքային դասարանների, արտադպրոցական աշխատանքների ժամանակ:

Ուսուցչի աշխատանքը հոսքային դասարաններում իրականացվում է՝

- ծրագրային,
- միջառարկայական, հոսքային տարրերն ապահովող կոմպետենցիաներով: Արտադպրոցական աշխատանքների կատարման ժամանակ պահանջվում են՝
- ստեղծագործական,
- կրեատիվ,
- խթանող կոմպետենցիաներ:

Աշխատանքը կրթության առանձնահատուկ կարիք ունեցող աշակերտների հետ պահանջում է սոցիալական, ախտորոշող և զարգացնող կոմպետենցիաներ:

«Ելակետային, մասնագիտական և առարկայական կոմպետենցիաներն ապահովում են ուսուցչի պրոֆեսիոնալիզմը»:

Ուսուցչի մասնագիտական կոմպետենցիաների զարգացումը օրապահանջ է:

Պատմական այս փուլում գիտատեխնիկական զարգացման պայմաններում պիտի փոխվեն նաև կրթությանը ներկայացվող պահանջները:

Կրթությունն իրականացնող սուբյեկտը՝ մանկավարժն իր իմիջով խիստ տարբեր է նախորդ դարերի ուսուցիչներից: Այսօր աշակերտակենտրոն և փոխներգործուն ուսուցումը պահանջում է այլ որակի մասնագետ:

Մանկավարժ, ով կարևորում է աշակերտի մտածողության զարգացումը, ուսուց - ման ժամանակ հենվում է աշակերտների կարծիքի վրա, փորձում է ավելի ակտիվ ուսուցում իրականացնել:

Եզրակացություն

Այսպիսով, ինչպես մարդկային գործունեության ցանկացած տեսակ, մանկավարժական գործունեությունը նույնպես ունի հետևյալ բնութագրերը՝

- նպատակաուղղվածություն,
- մոտիվացվածություն,
- առարկայնություն, որոնց վարպետացման հարցում էլ օգնության է գալիս մեթոդական միավորումը:

Մանկավարժական գործունեության սպեցիֆիկ առանձնահատկություններից է նրա արդյունավետությունը:

Իր կառուցվածքային կազմակերպմամբ մանկավարժական գործունեությունը բնութագրվում է գործողությունների ամբողջականությամբ:

Մանկավարժական գործունեության առարկա է հանդիսանում սովորողների ուսումնական գործունեության կազմակերպումը, որն ուղղված է նրանց կողմից սոցիոմշակութային փորձի՝ որպես զարգացման հիմքի և պայմանի յուրացմանը:

Մանկավարժական գործունեության միջոցներ հանդիսանում են գիտական (տեսական և էմպիրիկ) գիտելիքները:

Սոցիոմշակութային փորձի փոխանցման եղանակներն են բացատրությունը, ցուցադրությունը, համատեղ աշխատանքը, սովորողների անմիջական պրակտի - կան, թրեյնինգները:

Մանկավարժական գործունեության պրոդուկտ է հանդիսանում սովորողի անհատական փորձի ձևավորումը՝ աքսեոլոգիական, բարոյաէթիկական, հուզական - իմաստային, առարկայական, գնահատողական բաղադրիչներով: Մանկավարժա - կան գործընթացի արդյունք հանդիսանում է՝ սովորողի անձնային, ինտելեկտուալ զարգացումը, նրա՝ որպես անձի, գործունեության սուբյեկտի կատարելագործումը: Արդյունքների դիագնոստիկան կատարվում է դասընթացի սկզբում և վերջում սովորողների որակների համեմատությամբ:

Մանկավարժի՝ որպես մասնագիտական գործունեության սուբյեկտի ընդհանուր բնութագիրը նրա նպատակների, առարկայի, միջոցների հիման վրա, ցույց է տալիս այս մասնագիտության ամբողջ բարդությունն ու բազմասպեկտությունը:

Մանկավարժի անձը ուսուցանման մթնոլորտում առաջնային տեղ է զբաղեցնում, նրա այս կամ այն հատկությունները բարձրացնում կամ իջեցնում են ուսուցանման դաստիարակչական ազդեցությունը։

Մանկավարժական գործունեության հաջողությանը նպաստող գործոններից են ուսուցչի անձնային որակները։

Անհրաժեշտ է այնպիսի որակների համադրություն, ինչպիսիք են՝

- նպատակաուղղվածությունը,
- վճռականությունը,
- աշխատասիրությունը,
- դիտողականությունը։

Հատուկ ընդգծվում է՝

- սրամտության,
- հռետորական,
- արտիստիկ ընդունակությունների կարևորությունը։

Մանկավարժին՝ որպես գործունեության սուբյեկտի դիտարկելիս հետազոտողները առանձնացնում են մասնագիտական-մանկավարժական որակներ, որոնք կարող են մոտ լինել ընդունակություններին և զուտ անձնային որակներին։

Դրանց են դասվում՝

- մանկավարժական էրուդիցիա,
- մանկավարժական նպատակադրում,
- մանկավարժական մտածողություն,
- մանկավարժական հնարամտությունը,
- մանկավարժական կանխատեսումը,
- մանկավարժական ռեֆլեքսիան։

Օգտագործված գրականության ցանկ

1. Բալյան Ա.Ա., Մանկավարժական վարպետության հիմունքներ, Երևան 1988
2. Թոփուզյան Ա., Ուսուցչին ներկայացվող ժամանակակից պահանջները, Մանկավարժական ժամանակակից հիմնախնդիրներ, Երևան 2015
3. Մինասյան Բ., Մանկավարժութեան հիմունքները, Թաւրիզ 1931
4. Абросимов В.Н., Профессиональные качества преподавателя, стандарты и мониторинг в образовании 2001, No 6
5. Маркова А.К., Психология труда учителя, книга для учителя. Москва: Просвещение 1993